



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

LTN

1954

1999

архивная работа р.

*Հանրային և Կրթության նախարարության Կրթության բաժնի*

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԷԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ  
Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՎԱՐԴԱ ՊԵՏԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ**

Ամօր, յաւիտենական ամօր Հայերին... Կիսագազան սեւամորթ ստրուկը հիմնեց իւր անկախ « Լիբերիա » պետութիւնն եւ դարերով հաշածուած ջնուղբ փողի ուժով իրեն սեպնականութիւն դարձուց Պաղեստինի 2/5 մասը. իսկ անհոգ Հայերը իրենց հարագատ դրախտ-Հայաստանի մեջ մեկ բիգ անկախ խորշ չունին...

1025

Բ. ՏՊԱԿՈՒԹԻՒՆ



ՀԱՅՐԵՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐՓՈՒԳՆԱՆԻ  
MARSEILLE

IMPRIM. ET PAPETERIE DU MIDI M. SCHICKLER  
44, Allées de Meilhan, 44

1891

4 Կ 54-60  
28 1961

## Ա. Զ. Դ.

Այս Վարդապետարանի Ա. տպագրութեան քիչ ժամանակի մէջ տպառիւը ապացոյց է Հայ ազգի կողմէն գրտած ընդունելութեանը : « Հայոց Հայրենասիրական Միութեան » Վարչութիւնը այժմ՝ երկրորդ անգամ զայն տպագրութեան տուած ժամանակ, աւելի բազմաթիւ օրինակներ տպել տարով աւելի աժանագին անել ուզած է որով « Հայոց Հայրենասիրական Միութեան » անդամները և բարեկամները աւելի դիւրութիւն կունենան Հայ ժողովրդին մէջ տարածելու այս Վարդապետարան :

# Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն

Հ Ա Յ Ա Տ Տ Ա Ն Ի

## Ա Ջ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Ր Յ. Ո՛վ պիտի ազատէ Հայաստանը օտարների ձեռքէն :

Պ Տ Ա Ս Ս Ի Ա Ն. Ինքը Հայ ազգը պիտի ազատէ Հայաստանը օտարների ձեռքէն :

Հ. Ի՞նչ հնարներով :

Պ. Հնարները զանազան են, նայելով հանգամանքին. — երբեմն սեպհական զէնքով, երբեմն փողով և երբեմն օտարի օգնութեամբ :

Հ. Միթէ՞ կարող է Հայաստանը երբեւիցէ Հայերի սեպհականութիւնը դառնալ :

Պ. Այո՛, կարող է և անշուշտ կը դառնայ նա Հայերի սեպհականութիւն, եթէ բոլոր Հայերը՝ այր և կին, հարուստ և աղքատ, ծեր և պատանի, այնպէս բաղձան և ձգտին Հայաստանի

ազատութեանը, ինչպէս քաղցածը  
ձգտում է հացին և ծարաւը ջրին :

Հ. Ո՞ր երկիրը կոչվում է Հայաս-  
տան :

Պ. Հայաստան կոչվում է այն երկի-  
րը որ շրջապատում է Սեւան, Վան  
և Ուրմիա ծովափները, իսկ ամենը մի-  
ասին Մասիս լեռները :

Հ. Ո՞վ է Հայի թշնամին և ո՞վ է նո-  
րա բարեկամը :

Պ. Հայի թշնամին նա է որ աշխա-  
տում է Հայերին հեռացնել Հայաստա-  
նէն . իսկ նորա բարեկամը նա է որ  
գիւրացնում է նոցա կա՛մ իրենց աշ-  
խարհը վերադառնալու, կա՛մ իրենց  
աշխարհի մէջ հաստատուն մնալու :

Հ. Ո՞վ է իսկական Հայը :

Պ. Իսկական Հայը նա է որ անկեղծ  
կըղձայ և կընպատէ Հայաստանի ան-  
կախութեան . մնացեալները ո՛չ միայն  
անպիտան Հայեր, այլ և անպիտան  
մարդեր են :

Հ. Ո՞ր աշխարհի մէջ Հայը կարող է  
երջանիկ լինել :

Պ. Հայը երջանիկ լինել կարող է  
միայն Հայաստանի մէջ . վասն զի նա  
ամեն տեղ հալածուած և արհամարհ-  
ւած պանդուխտ է և միայն Հայաս-  
տանի մէջ նա պատուաւոր մարդ է  
մարդկութեան աչքում :

Հ. Հայերը Հայաստանէն դուրս ու-  
րի՞ն են նմանում :

Պ. Հայերը Հայաստանէն դուրս նը-  
մանում են օտարի տուն վարձողի որ  
աշխատում է զարդարել այն տան պա-  
տերը, որից վաղ կամ ուշ դուրս պիտի  
ձգէ նորան օրինաւոր տանուտէրը :

Հ. Ի՞նչ վիճակի կը հանդիպին Հա-  
Հայերը եթէ Հայաստանը չազատեն :

Պ. Եթէ Հայերը Հայաստանը չա-  
զատեն, նոքա շատ շուտ ( գուցէ յի-  
սուն տարիէն ) բնաջինջ կը լինին աշ-  
խարհիս երեսէն :

Հ. Մի՞թէ հարստութիւնը չօգնիլ

Հայերին պահպանելու օտարութեան մէջ :

Պ. Օտարութեան մէջ ազքատութիւնը անշուշտ կը մտնէ Հայերին. բայց աւելի շուտ կը մտնէ հարստութիւնը :

Հ. Ի՞նչ զանազանութիւն կայ հրպատակի և սարուկի մէջ : Հայերը օտար պետութիւնների հպատակ են թէ սարուկ :

Պ. Հպատակ նշանակում է իր ազգային կառավարութեան և նորա օրէնքներին կամուտը հնազանդութարուկ նշանակում է օտար պետութեան և նորա օրէնքներին ակամայ, բռնի և կամ յիմարաբար հնազանդութարուկ են, վասն զի նոցա օրէնքների յօրինելուն անմասն են եղել, և ամեն տեղ Հայի դաւանած կրօնը ընկճուած է և նորա ազգային ծէսերը հալածւած և արհամարհուած են :

Հ. Առանց վտանգի ի՞նչ ազգատի-

րական գործեր կարող է կատարել ամեն մի Հայ մարդ :

Պ. Իւր անձը վտանգի չենթարկելով, ամեն մի Հայ մարդ կարող է և պարտաւոր է այս գործերը կատարել. 1) Հայերէն լեզուն պահպանել իւր ընտանիքի մէջ և իւր ազգակիցների հետ խօսակցութեան մէջ. 2) Հայ ոգւով դատարարակել զաւակացը. 3) Սովորեցնել նոցա զէնքի գործածութիւնը. 4) Չամուսնանալ օտարի հետ. 5) Կարելի եղածին չափ աշխատիլ Հայաստանի մէջ ունենալու մեծ կամ փոքր հողային կալուածք. 6) « Հայոց Հայրենասիրական Միութեան » սեւէ մի օգնութիւն հասցունել ուղղակի կամ անուղղակի ինչ միջոցով որ այդ յարմար կը լինի իւր գտնուած դրութեան մէջ :

Հ. Որո՞նք են հայկական առաքիւնութիւնները :

Պ. Ամենագլխաւոր հայկական առաքիւնութիւնն է իւր ստացուածքն ու ա-

րինը նուիրել Հայաստանի ազատութեան Ս. Գործին . 2) Իւր բոլոր ոյժը թափել յորդորելով իւր ծանօթ կարող Հայերին որ երթան դէպի Հայաստան . 3) Համոզել և օգնել Հայերին իրենց սեպհական անշարժ կարուածք և հող ունենալու Հայաստանի մէջ . 4) Օգնել այն Հայերին որոնք Հայ ազգի օգտին համար կաշխատին Հայաստանի մէջ :

Հ. Որո՞նք են հայկական մոլութիւնները :

Պ. Ամենագլխաւոր և ազգակործան հայկական մոլութիւնն է աշխարհաքաղաքացիութիւնն որի սկզբունքներին համեմատ ոչնչանում են ազգութիւն և հայրենիք . -) Պանդխտութիւն . 3) Անձնական շահի համար պէս պէս խարդախութիւններ որով կոտորվում է Հայ ազգի անունը . 4) Շահասիրական ազգասիրութիւն (կեղծ ազգասիրութիւն) . 5) Հայ մեծաւորների գէմը մբոստութիւն (գաւաճանութիւն ,

մասնութիւն) և 6) Օտարի հետ ամուսնութիւն :

Հ. Ի՞նչ խօսքեր Հայոց լեզուէն դուրս պիտի ձգել :

Պ. Հայոց լեզուէն առ միշտ պէտք է դուրս ձգել վհատեցուցիչ , յուսահատական , ազգի վարկը ստորացնող , խորամանկութիւն (խարէական աչքբացութիւն) սերմանող խօսքերը , առածները , խրատները և խորհուրդները . Ինչպէս , « Հայը թակէ Վարդանին » , « Ռր տեղ Հայ , այն տեղ վայ » . « Է՛լի հայութիւն արի՞ր » ( այսինքն դարձեալ ամենավատթար գործ գործեցի՞ր ) . « Հաստն ու բարակ է մէկ գին , վա՛յ է բարակ մանողին » կայն :

Հ. Առաւօտ ու գիշեր ի՞նչ աղօթք պիտի անէ Հայը :

Պ. Հայը քնէն զարթելիս , կամ քուն մտնելիս , միայն այս աղօթքը պիտի կարգայ . « Ո՛վ բարեգութ Աստուած ,

օգնէ՛ ինձ Հայաստանը ազատելու » :  
Գորանից աւելի ոչ մի ուրիշ ազօթք  
հարկաւոր չէ՛ Հային :

Ը. Հայ պատանիների համալսարան  
մտնելը կը նպատէ՞ հայկական նպա-  
տակներին :

Պ. Այժմ հայ պատանիների համա-  
լսարան մտնելը վերաբերմամբ Հայոց  
նպատակներին նոյն նշանակութիւնն  
ունի, ինչ նշանակութիւն որ կունենար  
աւագակի հէնց վրադ յարձակուած  
բոսպէին կամենայիք սուրի և զէնքի  
գործարաններ շինելու : Այս մասին  
Հայերը առ սակաւը հարիւր տարի ու-  
շացել են : Միւս կողմէ 40-50 ամեայ  
փորձը ցոյց տուաւ որ համալսարան-  
ների տուած արգիւնքը հայ պատա-  
նիներին դոքա էին . 1) Գիւրին միջոց  
ապահով ապրուստ ճարելու և առաջ-  
րէզ շինելու և 2) անզգայի կերպով  
ստուչելու իւր ազգէն և հոգւով օտա-  
րանալու նորա շահերէն : Իսկ եթէ կան

մի քանի իսկապէս արժանաւոր հայ հա-  
մալսարանականներ , պէտք է կարծել  
որ նոքա առանց համալսարան մտնե-  
լու եւս ազգի պիտանի անդամները կը  
լինէին , ինչպէս որ կան ազգին մէջ շատ  
նշանաւոր մարդիկ որոնք երբէք հա-  
մալսարան եղած չեն : Պէտք է ի նկա-  
տի ունենալ և այն հանգամանքը որ  
այժմեայ համալսարանները և նոյն իսկ  
գիտութիւնը դարձել են բռնակալների  
ձեռքումն ազգեր ստրկացնելու հզօր  
գործիք :

Ը. Գալոց ազատուած Հայաստանի  
մէջ ազնուականութիւն և այլ առանձ-  
նաշնորհուած դասակարգեր պիտի լի-  
նին թէ ոչ :

Պ. Քաղաքացիական հաւասարու-  
թիւն պիտի լինի Հայաստանի ժողովր-  
դին մէջ : Բայց ի հարկէ մի մասնաւոր  
պատիւ կամ նշանակութիւն կը ստա-  
նան նոքա կամ նոցա ժառանգները  
որոնք առաջինը կը բարձրացունեն

տուրը Հայաստանի ազատութեան համար և կամ կը զբաւուին կեանքերէն արեան դաշտի մէջ : Ազատ Հայաստանի մէջ կազմուելիք Ազգային ժողովը պարտաւոր կը լինի իւր յարմար գատած միջոցներով մասնաւոր պատիւներ տալ կամ օգնութիւններ անել այդպիսիներին և կամ նոցա անխնամ թողած ժառանգներին . հայրենիքը չի մոռանայ իւր ազատութեան համար զո՛հ եզրոյններին :

Զ. Ո՞րն է Հայերի նշանաբանը :

Պ. Հայերի նշանաբանը այս երեք բանն է . ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԱՀ :

Ը. Հայաստանը կարժէ՞ այդքան մեծամեծ զոհերի :

Պ. Այո՛, Հայաստանը կարժէ ամենամեծ զոհերի, վասն զի նորա մէջ կեցողի կեանքի տեսողութիւնը միջին թրւով է 75 տարի . Հայաստանի հողը մըշակողին տալիս է մէկ ցանած սերմնահատի վոխարէն 45-50 սերմնահատ .

Հայաստանի մէջ վազած աղբիւրների կէսը հանքային բժշկարար ջրեր ունին . Հայաստանի գիրքը միջնաշխարհային է, այսինքն Ասիայի և Եւրոպայի սահմանագլուխներումն : Հայաստանի ժողովուրդը եթէ չը լինի ազգերի մէջ ամենահզօրը, գէթ նա կը լինի ամենահարուստը և ամենաբազաւորը : Հայաստանը հարուստ է ե՛ւ կենդանիներով, ե՛ւ բոյսերով ե՛ւ հանքերով : Ը. Ի՞նչ պատճառով Հայոց անկախութիւնը չորս անգամ կորաւ :

Պ. Հայերի անկախութեան չորս անգամ կորչելու պատճառները միեւնոյնն էին . նախ՝ Հայաստանի հողը պատկանում էր 3-400 մեծամեծների (նախարարների) և ո՛չ թէ իւր միլիոնաւոր ժողովրդին . և երկրորդ՝ Հայերի խելքը չկտրեց ազգային դրական օրէնքներ յօրինելու : Հայոց ազգը չունէր ո՛չ սեպհական հող և ո՛չ օրէնք : Նորա գրացի տէրութիւններին շատ

դիւրին էր ընկճել մի ազգ որ զրկւած էր և՛ իրաւունքէ և՛ սեպհակահուսթենէ . իսկ Հայ ազգի համար օտարների լուծը սնչնով աւելի ծանր և դառն չէր , քան թէ համազգի նախարարների լուծը :

Հ. Ո՞րը աւելի արեան և փողի զոհ է պահանջում Հայերից . թշնամիի հետ պատերա՞զմը թէ այժմեայ խաղաղ ստրկական վիճակը :

Պ. Այն ստոր , արտասուելի , անգոսնելի վիճակը ուր կան այժմ՝ Հայերը , աւելի արեան և փողի (նիւթական) զոհ է պահանջում Հայերից , քան թէ դէմ առ դէմ պատերազմը սինլքոր թաթարների, ֆուրգերի և Չէրքէզների հետ . տարին տարեհազար հազարաւոր Հայեր են մորթվում և միլիօնների փող և ապրանք են կողոպտվում , յախտակվում , գողացվում , փչացվում անպաշտպան , փոքրօրի Հայերից :

Հ. Ո՞վ պիտի բարձրացնէ աղատութեան դրօշակը և սուրբ :

Պ. Դրօշակը պիտի բարձրացնէ հայ վարդապետը . իսկ սուրբ՝ բոլոր հայ պատանեկութիւնը , երիտասարդութիւնը և տղամարդիկ , 16 տարեկանից բռնած մինչեւ 45 տարեկանը :

Հ. Ի՞նչ փողով ձեռք պիտի բերուին զէնք , պարէն , զգեստ և այլ ուղղամարմէրք :

Պ. Ժողովրդէն մաս մաս հաւաքուած փողերով : Այն ժողովուրդը որ իր վերայ բռնացող և իրեն թշուառացունող տէրութեանը պահպանելու համար նորա բոլոր ծախսերը կանէ իր վճարած սուրքերով , կարող է և պարտաւոր է անել իր սեպհական հայրենիքի ազատութեան համար ծախսերն եւս . այս պէտք է իմանայ ամեն Հայ և նորահամեմատ ուրախութեամբ և ինքնաշօթար վճարէ իւր ազգային պարտքը : Բացի այդ , այն հայրենասէր հարուստ Հայեր որ այժմէն մեծագումար փողեր նուիրելով կօզնեն Հայաստանի ազա-

1025

առթեան գործին, կը նշանակուին «Հայոց Հայրենասիրական Միութեան» կողմէն և կը ներկայացուին ազազայ ազատուած Հայաստանի Ազգային ժողովին որ կարող է իր արժան համարած փոխարինութիւններն անել նոյն, վաճառելով Հայաստանի մէջ թիւրքերին ունեցած պետական բոլոր անշարժ կալուածներն որոց ազօրինի կերպով տիրապետած են այժմ այդ բարբարոս օտարազգիներ և պէտք է Հայի սեպհականութիւն դառնան :

Հ. Ո՞վ պիտի ընտրուի Հայաստանի կառավարիչ :

Պ. Հայաստանի կառավարիչ կընտրուի նա որին զինուորեալ հայ գունդը կը ճանաչէ ամենաքաջը, ամենախոհեմը և ամենազնիւր և որ կարժանանայ Հայաստանի ժողովրդէն ընտրուած Ազգային ժողովի մեծամասնութեան քուէին :

Հ. Ի՞նչ է նշանակում յաղթել և ի՞նչ յաղթուիլ :

Հ. Յաղթել նշանակում է թշնամի սուղեւ անվախ գնալ և մեռնելէ չը սարսափիլ. յաղթուիլ նշանակում է պատերազմի դաշտումը սրտի մէջ երկիւղ տածել : Անվախը (քաջը) վախկոտին միշտ կը յաղթէ :

Հ. Հայի ազգային յատկանիշները որո՞նք պիտի լինին :

Պ. Հայի ազգային յատկանիշները պիտի լինին Հայոց լեզուն և Հայաստանը ազատուած տեսնելու փափազը :

Հ. Ո՞րն է Հայ ազգի կրօնը :

Պ. Հայ ազգի կրօնն է հաստատուն հաւատը թէ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ԱԶԱՏՈՒԻ ՕՏԱՐԻ ԼԾԷՆ» : Ով այս բանիս հաւատում է, նա է ուղղափառ հայազաւանը :

Հ. Ապա ի՞նչ են նշանակում լուսաւորչադաւան, պապադաւան կամ կաթոլիկ և լուսերական կոչումները :

Պ. Դոքա մարդկային կրքերի և սոցիալութեան ստեղծած բաժանարար

դադարաւարներն են որոնք, թէեւ այժմ հնացած, մեծապէս փնասեցին և դեռ փնասում են Հայ ազգին :

Ը. Ճշմարիտ է որ ասում են թէ ազգը ստրկութենէ ազատելու համար մեծամեծ վտանգների ենթարկուել և ահագին փողեր պիտի վասնել :

Պ. Այո՛, շատ ճիշդ է : Եթէ ազատողք երկու երեք հոգի լինին, վտանգը շատ մեծ է և կորուստը անխուսափելի, զոհերն էլ մարդկային ուժէն վեր. բայց եթէ ամբողջ ազգը մասնակցէ, այն ժամանակ ե՛ւ վտանգը ե՛ւ զոհողութիւնը այն աստիճան կը թեթեւանան որ ամեն մի անհատին գրեթէ անզգալի կերեւին :

Ը. Ա՛յլ պիտի միաւորէ Հայերին այդ մեծ գործի համար :

Ը. Ընդհանուր վտանգը մտաւրուս կորստին : Իորա համար ամեն մի Հայի վրայ սուրբ պարտք կայ միմեանց պատմելու, հասկացնելու, որ եթէ

նոքա վաղորօք չազատեն Հայաստանը, օտար ազգերը բնաջինջ կանեն Հայոց լեզուն և Հայաստանեայց եկեղեցին և այնուհետեւ Հայը ինքն ըստ ինքեան կանհետանայ աշխարհիս երեսէն. այն ժամանակ ամեն գերդաստանի հայր կիմանայ որ լաւ է եթէ նորա մի որդին ծառայէ իւր ազգին քան թէ իւր ամբողջ ընտանիքը ոչնչանայ, և լաւ է որ իւր հարստութեան մի փոքրիկ մասը ընծայուի իւր ազգի օգտին քան թէ իւր բոլոր գանձը օտարի սեպհականութիւն դառնայ :

Ը. Ի՞նչ են նշանակում այն գեղեցիկ արտօնութիւնները որ ժամանակից ժամանակ առատ ձեռքով շրնորհում են օտար պետութիւնները Հայոց ազգին :

Պ. Այն արտօնութիւնները որ օտար պետութիւնները շնորհում են Հայերին, նման են թակարդի մէջ դրած այն համով կերին որով երե-

խայք բռնում են միամիտ թուշունե-  
ներին : Այդպիսի արտօնութիւններով  
ամայացաւ Հայաստանը իւր բնիկ ժո-  
ղովրդէն և պարզամիտ Հայերը հասան  
այսօրուայ ցաւալի թշուառ վիճակին :

2. Հայերին ոտքի ելնելը (Տաճկի  
բռնութեան դէմ) իրաւացի՞ գործ է  
թէ ապօրինի :

Պ. Հայերին ոտքի ելնելը Հայաստա-  
նի ազատութեան համար իրաւացի  
գործ է թէ՛ քրիստոնէական և թէ՛  
քաղաքական օրինաց կողմանէ և աշ-  
խարհիս երեսի ամեն լուսաւորեալ և  
ազնիւ մարդոց գովասանքը կը շարժէ :

2. Ուրեմն Հայերը իրաւունք ու-  
նի՞ն գէնքի զօրութիւնով ազատել ի-  
րենց հայրենիքը :

Պ. Հայերը Հայաստանը գէնքի զօ-  
րութիւնով ազատելու համար ո՛չ միայն  
ունին իրաւունք , այլ և ամեն մի Հայի  
վրայ սուրբ պարտք կայ այդ սիրալի  
գործը կատարելու , ինչպէս որ ամեն

հարազատ որդի լիակատար իրաւունք  
ունի իւր հօր և նախորդների ժառան-  
գութիւնը ստանալու և մեծ յանցանք  
է իւր որդւոց և յետնորդների առջև,  
եթէ նա այդ ժառանգութենէն հրա-  
ժարի կա՛մ կամաւ , կա՛մ յիմարու-  
թեամբ և կա՛մ փոքրոգութեամբ :

2. Ո՞ւր կերթան հոգիները այն  
մարդոց որոնք կը մեռնին ճակատի մէջ :

Պ. Աւետարանի խօսքերի հիմանց  
վրայ՝ ճակատի (ազգային պատերազմի)  
մէջ մեռնողի հոգին , ի շարս սրբոց ,  
անշուշտ կերթայ երկնից արքայու-  
թիւն , վասն զի այդպիսին կեանքէն  
զրկուել է ի սէր և ի պաշտպանութիւն  
իւր նեղեալ մերձաւորներին . նորա  
անունը կը լինի նահատակ և նորա յի-  
շատակը Ս. եկեղեցին կը տօնէ մինչեւ  
աշխարհի կատարածը :

2. Հրացանի ամե՞ն գնդակը գիւյ-  
չում է և ամե՞ն խոցուածը մեռնում է :

Պ. Վիճակագրական ամենաճիշդ

հաշիւներէն երեւում է որ հրացանի տասը հազար գնդակէն մինն է դիպչում մարդուս և 38 խոցուածներէն մինն է միայն մեռնում :

Հ. Պատերազմի դաշտում խոցուած հոգեվարը չի՞ տանջվում :

Պ. Ամենափորձառու բժիշկները հաստատում են որ կակուղ անկողնի մէջ մեռնելը հազարապատիկ աւելի դժուար է քան թէ պատերազմի դաշտում . իսկ զէնքի պատճառած մահը ամենաթեթեւն է մահերի մէջ :

Հ. Հնար կա՞յ պատերազմի դաշտում մահից ազատուելու :

Պ. Այո՛, կայ և մի հատիկ հնարն է այս . եթէ չես ուզում որ թշնամին քեզ սպանէ , դու ինքդ շտապէ՛ նորան սպանելու : Ուր վտանգը շատ մեծ է և անխուսափելի , համարձակ վազէ՛ նորա առջեւ և վտահ եղիր որ վտանգը ինքը կը փախչի քեզանից : Այս փորձած երեւոյթ է : Թշնամիի առջև փախ-

չելը երկու վատ հետեւանք ունի . մէկ որ՝ փախչողը անպատճառ կ'սպաննուի . և երկրորդ՝ նա ակներեւ կորուստի կը մատնէ իւր հաւատարիմ զինակից ընկերին :

Հ. Հայի կայրւածական հարստութիւնը օտար աշխարհի մէջ ի՞նչ է :

Պ. Հայի կայրւածական հարստութիւնը օտար աշխարհի մէջ սարկի աներեւոյթ , բայց ամրապինդ շղթայ է , որով կաշկանդուած են նորա ձեռները և ստները :

Հ. Ի՞նչ են այն պատուանունները , տիտղոսները , աստիճանները , պատուանշանները և վկայաթղթերը որ ունին Հայերը օտար պետութեանց մէջ :

Պ. Այն պատուանունները , տիտղոսները , աստիճանները , պատուանշանները և վկայաթղթերը որ ըստացել են Հայերը օտար պետութիւններէ , սարկութեան գլխազիրներ են ի տրիտուր իրենց կորցրած ազատու-

թեան և հայրենիքի ուրացութեան :

Հ. Ե՞րբ օտարազգիք կը դադարին, արհամարհելէ, ատելէ և հալածելէ Հայերին ինչպէս որ այժմ, և ե՞րբ կը սկսին հակառակ դուրա յարգել նոցա:

Պ. Երբ Հայերը ազատեն իրենց հայրենիքը օտարի լծէն. բայց այդ չեղած, նոքա մինչեւ իրենց բնաջինջ լինելը կը մնան արհամարհուած, աւտած, անուանարկ, հալածուած և դարչելի արարածներ օտարի աչքում, աւելի ստոր քան թէ ջնուղները, ցիկանները և փարխաները :

Հ. Հայերը ե՞րբ ոտքի բարձրանան:

Պ. Երբ որ մեծամեծ ազգերի մէջ սկսուի կենաց և մահու պատերազմը :

Հ. Իսկ մինչեւ այն ժամանակ ի՞նչ պիտի անեն Հայերը :

Պ. Այս վարդապետարանը իմաստասիրելով, նորա բովանդակութիւնը սրբութեամբ կատարեն և ոյժ տան Հայոց Հայրենասիրական Միոշրեսն:

Հ Ա Յ Ո Ց  
Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն  
Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

==  
Ն Պ Ա Տ Ա Կ Ե Ի Մ Ի Ջ Ո Յ Ն Ե Ի

(Քաղուած կանոնագրէն)

« Հայոց Հայրենասիրական Միութեան » նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցունելու թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պետքերին համեմատ: Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւններ որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին :

« Հայոց Հայրենասիրական Միութիւն »ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին ոյժ գո-

յացունել Ազգին մէջ իւր ազատու-  
թեան համար, հրատարակութիւններ  
կանէ, գիմուսներ կանէ որոց որ պէտք  
է և նիւթապէս ու բարոյապէս կը բա-  
ջալերէ անոնց որոնք անձնուիրու-  
թեամբ կաշխատին. հայրենիքի ազա-  
տութեան գործին :

Միութիւնը կունենայ իրեն բերան  
եզոյ լրագիր որ, բացի զանազան լու-  
րեր տալէ իբրև լրագիր, կը հաղոր-  
դէ ընդհանրութեան ինչ որ Միութիւ-  
նը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ  
կուտայ Հայաստանի և տարաբնակ հա-  
յերի գրութեան վրայ և կը ծառայէ  
հայրենասիրական եռանդը արծար-  
ծելու Հայերին մէջ : (\*)

Մանօք. «Հայոց Հայրենասիրական Մի-  
ութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ  
ուզողները պէտք է գիմե՝ հետեւեալ  
հասցէին .

M. Portoukalian  
(FRANCE)

Marseille

(\*) «Հայոց Հայրենասիրական Միու-  
թիւն»ը կը սպաստէ Արմէնիա լրագրի  
հրատարակմանը :

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Շուտով մամուլին կը յանձնուի  
Հայոց Հայրենասիրական Միութեան  
Բ հրատարակութիւնն

## ՀԱՅ ՊԱՏԱՆՈՒ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ն Ո Ւ Է Ր

ՀԱՅ ԿԱՄԱՌՈՐՆԵՐԻՆ

Այս տետրակի մէջ տեղեկութիւն-  
ներ կը արուին հրացանի գործածու-  
թեան, ռազմական նախադիտելիքնե-  
րի և վերաւորուած զինուորներին  
արուելիք նախնական խնամքների վը-  
րոյ :

# Մ Ր Մ Է Ն Ի Ա „ Ի

## ՅՈՒՇԱՐԱՐ

Ա ՏԱՐԵԿԱՆ

(1885-86)

Շատեր կը փափագէին ունենալ Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը որոնք հայենական խնդրին հայ գաղթականութիւններէ ուշագրութեան առարկայ դառնալուն սկզբնական պատմութիւնը կը ներկայացունեն : Բայց որովհետեւ այդ թիւեր բոլորովին սպառած են , նոյն տարեշրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի չափ ամփոփուած են այս Յոշարարի մէջ , մի քանի թղթակցութիւններով մէկտեղ որոյ մասին խօսուած է այդ առաջնորդող յօդուածների մէջ :

Որպէս զի Արմենիայի բարեկամները կարենան զիւրութեամբ տարածել Արմենիայի Յոշարարը իրենց շրջանների մէջ , աժան մի գին նշանակուած է :

Արմենիայի Յոշարարը իր յառաջարանով մէկտեղ կը բազկանայ 124 երեսներէ , ութածալ գիրքի վրայ տըպագրուած : Գինն է 1 ֆրանք ե 40 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանք) : Տարածելու համար 10 հատ մէկէն առնողին , փոխանակ 14 ֆրանքի , 11 ֆրանքով կը զրկուի ապահովագրուած ծրարով :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

|   |                 |
|---|-----------------|
| Ա. Հայ դիւցազնունի մը...  | (Սպառած)        |
| Բ. Հայ գիւղացի.....   | »               |
| Գ. Սաղմոս Իսրայելի.....   | »               |
| Դ. Ագատուքիւն Պուրաբիոյ<br>Եւ կենսագրութիւնք Պուր-<br>դար ապստամբապետաց<br>(1 Փր. 10 սանթիմ)...         | 1 Փր. 50 սնթիմ. |
| Ե. Հայաստանի բշուառները<br>(90 սանթիմ).....   | 1 » 20 »        |
| Զ. Գամառ. Քարիպա. — Ժո-<br>ղովբղական Բնրէրցարան<br>50 հատը մէկէն 2 Փր. և 50<br>սնթիմ. իսկ հատը (5 սնթ.) | , 10 »          |
| Է. Լինջի օրէնքը Տաճկանա-<br>յաստանում.....  | (Սպառած)        |
| Ը. Թիւրքիաի Հայերն Եւ իրենց<br>դրացիներ (35 սանթիմ).  | , 50 սնթիմ.     |
| Թ. «Արմենիա» ի լուրարար<br>(1 Փրանք).....   | 1 Փր. 40 սնթիմ. |
| Ժ. Վրէժ (15 սանթիմ)...  | , 20 »          |
| ԺԱ. Թումաս Բոցարիս (15<br>սանթիմ).....  | , 20 »          |
| ԺԲ. Նմոշներ Մ. Փորթու-<br>գայեանի գրած ոտանա-<br>ւորներէն (10 սանթիմ)                                   | , 15 »          |

Այս գիրքերի վրայ մասնաւոր զեղչ կը  
վննի Պարսկաստանի Հայերին համար ո-  
րոց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած  
վերոգրեալ գիներովը :

Հին Հայաստան  
1992

«Ազգային գրադարան»



NL0342534

